

ԲԱՌԱՋՆՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱՐԱՌ ԼԵՁՈՒՄՆ ՔԱՆԵ ՄԻ ԲԱՌԵՐԸ.

Իմիս, իմիսը, իմին, իմինս. — Իրիմու եւ նախիջեւանի աշխարհաբառին մէջ կգործածեն ոմանք իմիս, իմիսը, որ աւեր բառեր են՝ փոխանակ իմ եւ իմս բառերուն. Պօլսեցիք եւս իմին, իմինս բառերը կգործածեն՝ իբրեւ իմային կամ իմոյին բառէն ելած:

Իմանալ. — Հայաստանի շատ կողմերը այս բառը կբանեցընեն իւր բնիկ նշանակութեամբը՝ իբրեւ հասկընալ. իսկ ուրիշ տեղեր իմանալ կըսեն զգալուն:

Ինծի, ֆեզի, մեզի, ձեզի. — Այս գերանուանց ծայրը ի տառը դնելը աւելորդ ծանրաբեռնութիւն մի է, որովհետեւ շատ կարելի է ըսել ինձ, ֆեզ, մեզ, ձեզ՝ առանց խօսքին խրթնութիւն տալու: — Ոմանք աւելի եւս կծանրաբեռնեն՝ երբ կըսեն ինծիկ, ֆեզիկ, մեզիկ, ձեզիկ:

Ինծմե, ինծնե, ինե, իզնե, ինծանե, ինծանից, ընծանից. — Արդեօք այսքան տեսակ բացառականներէն որն ընտրելու է յստակ աշ-

խարհաբառի համար. — Հարկաւ այն որ գրաբառին՝ այսինքն յինեկ բառին աւելի մօտ է, որ է ինե ձեւը:

Ինը, իննը, ին. — Սոցա մէջ առաջինը ամենէն սովորականն է, բայց Հայաստանի շատ կողմերը իննը կըսեն, եւ տեղ տեղ ին: Լաւ կլինէր ամէն տեղ ինն ըսելու եւ գրելու սովորութիւնը մտնէր:

Ինչո՛ւ, ընչո՛ւ, ինչի՞ համար. — Ինչ բառին այս կերպ հոլովականը թէպէտ գրոց մէջ կգրանուի տեղ տեղ, բայց սովորական չէ: Աշխարհաբառին մէջ սովորութիւն եղեր է ինչո՛ւ համար ըսել՝ տաճկերէն նկ իչին կամ նիչին հարցականին ձեւովն ու նշանակութեամբը: Լեհաստանի Հայերը ինչի՞ սեպ կըսեն, իբր ինչ սեպեպով. կամ թէ ինչ հիսապով, ինչ սեպեպով: Փափաքելի էր գրոց Էր եւ ընդէր հարցականները, որ տեղ տեղ արդէն կբանին, սովորական դարձընել մաքուր աշխարհաբառին մէջ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՓ

ՎԱՐՍԱԿԻ ԶՈՒՐ՝ ՀԻՒԱՆԴԱՅ ՀԱՄԱՐ.

Վարսակի (ուրաֆի) ջուրը, որ հիւանդաց օգտակար կհամարուի իբրեւ զովարար եւ սննդարար ըմպելի, այս կերպով կընաս պատրաստել: Վարսակին մաքուր ու խոշոր տեսակէն առ կէս ֆունթ, ու երեք չորս ֆունթի կամ մէկ օխայի չափ ջրի մէջ եփէ կէս ժամ. յետոյ քամէ, վրան աւելցուր ուզածիդ չափ լեմոնի ջուր եւ շաքար, ու պաղ տեղ մը դիր: Լեմոնի ջրին տեղը կարելի է ուրիշ օշարակ (շերպեր) գործածել. այն ատենը շաքար դնելը հարկաւոր չլինիր:

ԳՈՐԻՒ ԶՈՒՐ՝ ՀԻՒԱՆԴԱՅ ՀԱՄԱՐ.

Վերինին պէս եփէ գարին (արիան) մինչեւ որ ճաթուտի. յետոյ բրդեղէնէ մը անցընելով քամէ, շաքար ու լեմոնի ջուր դիր մէջը, քիչ մըն ալ ազնիւ գինի, — ախորժափամ ու օգտակար ըմպելիք մը կգառնայ:

ՔԱՂՅՐԱՀԱՄ ՇԻՃՈՒԿ.

Մէկ շիշ (պուգալ, պուրիլֆա) կանթին չորս հաւ կըթի ֆերմըկուց առ ու սաստիկ կրակի վրայ եփէ որ շուտ մը եփ ելնէ. յետոյ պաղեցուր ու քամէ: Հաւկըթի տեղ կարելի է ձկան սոսինձ գործածել:

ԹԹՈՒ ՇԻՃՈՒԿ.

Երկու շիշ կանթին վրայ լից դգալ ու կէս լեմոնի ջուր կամ գինիի քացախ, եփէ ու քամէ: Եթէ շիճուկը սաստիկ ԹԹՈՒ լինի, փոքր ինչ շաքար աւելցուր վրան:

ԽՆԶՈՐԱՀԱՄ ՇԻՃՈՒԿ.

Լեմոնի ջրով շինուած մէկ շիշ շիճուկին մէջ երկու ԹԹՈՒ աշխնոր դիր՝ մանր կտորներ ըրած, քառորդի մը չափ եփէ, յետոյ պաղեցուր ու քամէ եւ փոքր ինչ շաքար աւելցուր: — Խնձորին տեղը կարելի է սալորի չոր գործածել, բայց լաւը խնձորն է: